



26-ը սեպտեմբերի, 2009թ.

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ընտրում են « Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ծրագրի Շահառուների խորհուրդը

Երևան, Հայաստան – 2009 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ընտրեցին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) անդամներին: Ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած 378 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն էին ստացել ընտրել այս ինքնատիպ կառույցի անդամներին, որի միջոցով իրականացվում է շահառուների ներգրավումը բազմամիլիոն ՀՄՀ-Հայաստան ծրագրին, ինչպես նաև վերջինիս հանրային վերահսկողությունը:

Քսաներեք /23/ կազմակերպությունների ներկայացուցիչներ գրանցվել էին որպես ՇԽ անդամության թեկնածուներ: Բուն քվեարկությանը մասնակցեցին 366 ընտրողներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ մինչև հինգ ձայնի իրավունք: Վավեր քվեաթերթիկների թիվն է՝ 360: Անվավեր է ճանաչվել 6 քվեաթերթիկ:

Ամենաբարձր ձայներ ստացած 15 թեկնածուներ ընտրվեցին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի անդամներ՝

N	Ներկայացուցչի ազգանուն, անուն	Կազմակերպություն	Մարզ	Հավաքած քվեներ
1	Մովսիսյան Կարինե	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ	Սյունիք	126
2	Մաթևոսյան Կարեն	«Ազատություն և իրավունք» ՀԿ	Երևան	124
3	Ասատրյան Լիլիթ	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցացիա» ՀԿ	Երևան	113
4	Զադոյան Կարեն	«Հայաստանի իրավաբանական հիմնադրամ»	Երևան	110
5	Պետկանյան Նունե	«Լուսաստղ» ՀԿ	Լոռի	110
6	Հովհաննիսյան Աշոտ	«Դիլենտ սերվիս» կրթական ՀԿ	Տավուշ	109
7	Շահինյան Պողոս	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ	Երևան	109
8	Հովհաննիսյան Հովհաննես	««Կովկաս» հասարակական հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Երևան	104
9	Սողոմոնյան Սյուզաննա	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ	Երևան	104
10	Բաբախանյան Գագիկ	«Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ»	Երևան	101
11	Բարսեղյան Պարզև	«Հասարակական քարոզչություն» ՀԿ	Արագածոտն	97
12	Ատովմյան Մարատ	««Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Երևան	96
13	Բաղիրյան Գրիգոր	«Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն» ՀԿ	Երևան	95
14	Վերանյան Անդրանիկ	«Նոյեմբերյանի Համայնքների Միություն» ԻԱՄ	Տավուշ	94

15	Ենգիբարյան Վիկտոր	«Հայաստանի Եվրոպական շարժում» ՀԿ	Երևան	92
----	-------------------	----------------------------------	-------	----

ՇԽ նորընտիր կազմը չորրորդն է 2006 թ. ի վեր, երբ տրվեց ծրագրի մեկնարկը:

Ընտրությունների համակարգումը իրականացվել է ընտրական հանձնաժողովի կողմից, որում ներգրավվել են քաղաքացիական հասարակության յոթ /7/ ներկայացուցիչներ:

Շահառուների խորհուրդը հանդիսանում է մի մեխանիզմ, որի միջոցով քաղաքացիական հասարակությանը և մարզերի ու համայնքների ներկայացուցիչներին հնարավորություն է տրվում ներգրավվել ՀՄՀ-Հայաստան Ծրագրի իրականացմանն ու կառավարմանը:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի նպատակն է նվազեցնել Հայաստանում գյուղական աղքատությունը՝ ներդրումներ կատարելով գյուղատնտեսության ոլորտի տնտեսական ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Ծրագրային գործունեության հիմնական ուղղություններն են՝ ոռոգման ենթակառույցների վերականգնումը, ջրի կառավարման կառույցների հզորացումը, ֆերմերների վերապատրաստումը և տեխնիկական օժանդակությունը, գյուղական վարկավորման մատչելիությունը և այլ հարակից աշխատանքներ:

Շահառուների խորհրդի, ինչպես նաև՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: